

ոչ սուրբ ոգեւորութեան կրակը, մեծապէս նպաստած կ'ըլլայ այն բանին, որ վաղը վառուի ազատութեան ջահը՝ լուսաւորելու համար Միացեալ եւ Անկախ Հայաստանի յաղթական թափօրի ճանապարհը, որի վրայ ընկան սերունդներ ամբողջ եւ գետերով արիւն թափուեցաւ:

Ժողովուրդներու եւ պետութիւններու կեանքը կը տեւէ դարեր, հազարաւոր տարիներ: Իմ յուշերու մէջ առնուած է պղտիկ Ժամանակաշրջան մը, պատմական տեսակէտով, վայրկեան մը միայն, բայց անհունօրէն կարեւոր: Ասիկա այն վայրկեանն է, երբ մեր ազգը՝ միացած մէկ խանդավառութեան մը մէջ, նորէն ստեղծեց իրեն համար անկախ ազգային կեանք մը:

Ես ջանացի ցոյց տալ ծագումը այդ կեանքի եւ անոր զարգացման ելեւէջները, մանաւանդ այն վայրկեանները, երբ ես ինքս եղայ զէպրերու սկիւնատեսը: Բայց կեանքը կանգ չառներ: Եւ միշտ կը շարժի առաջ: Եւ կեանքի մէջ ամէն բան կը փոխուի: Պիտի փոխուին, ի հարկէ, եւ Հայաստանի Հանրապետութեան

կեանքի զարգացման ապագայ պայմանները: Ան շատ ուրախութիւն ու վիշտ պիտի տեսնէ դեռ: Բայց թո՛ղ անոր համար ալ հարազատ դատնայ նշանաբանը այն քաղաքի, որի մէջ կը գրուին սոյն տողերը:

«Կը տատանի, բայց չի սուղուիր»:
ՎԵՐՁԱԲԱՆԻ ՏԵՂ

Ինչպէս «Յուշերու» յառաջաբանի մէջ ըսամ եմ, իմ գրուածքը պատմութիւն չէ, անշուշտ, այլ՝ պատմական նիւթ, յուշերու ձեւով: Եւ հասկնալի է, որ իմ գրութեան մէջ տեղ դրած են գերազանցապէս այն զէպրերն ու զէմքերը, որոնց հետ շփման մէջ եմ եղած ես, ինչպէս նաեւ յայտնուած են կարծիքներ, որոնց միակ պատասխանատուն ես եմ անհատաբար: Տարօրինակ չպէտք է երեւայ նոյնպէս եւ այն, որ, իրերու բերումով կամ պատահաբար, այս կամ այն փաստերն ու փաստաթուղթերը չեն արձանագրուած: Իմ դերը եղած է զրի առնել իմ իրբեւ քաղաքական գործիչի մը, յուշերը, յիշատակելով միաժամանակ յարակից զէպրերը: Աւելին — գործն է պատմաբանի:

(Վերջ)

ՀԱՅԱԳԷՏ ՄԱՐԳՎԱՐՏ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

II

ՀԱՅ ԱԶԳԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարքվարտի «Հայ ազգի ծագումը եւ վերականգնումը» խորագրով աշխատութիւնը¹⁾ լոյս է տեսել տակաւին 1919-ին:

Արժէ մի փոքր հանգամանօրէն կանգ առնել նրա վրայ: Բացի զուտ հետազոտական մասից, որ վերաբերում է հայ ազգի ծագման եւ կազմակերպման, աշխատութիւնը պարունակում է նաեւ մի յաւելում, որ վերաբերում է հայ պետականութեան վերականգմանը, եւ որ ներկայիս էլ շարունակում է պահել իր հրատապ նշանակութիւնը: Ուսումնասիրութեան հիմքում գրուած է հեղինակի մի դասախօսու-

թիւնը, որ նա կարդացած է եղել դեռ 1914-ին Բերլինի Հայագեաման Ընկերութեան նիստերից մէկում:

«Իրենց ամբողջ պատմութեան ընթացքում, — այսպէս է սկսում Մարքվարտ իր աշխատութիւնը, — հայերին միայն հազուադէպ անգամներ եւ կամ իսկապէս երբեք վիճակուած չէ եղել «ապրել ու մեռնիլ իրենց պետութեան համար», ինչպէս որ ժամանակին արտայայտուել են այն հայ մեծամեծները, որոնք յոգնել էին Մօրիկ կայսեր կողմից որպէս թընդանօթի միա գործածուելու թրակիայում՝ ընդդէմ սլաւների եւ աւարացիներին²⁾»:

Պատմական այս — թէեւ խոսացուած — իրողութիւնը յիշատակելով՝ Մարքվարտ կը ցում է անմիջապէս.

2) Սերէոս, 1879, էջ 54:

1) Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation", Berlin, 1919.